գարտիլ· աղաչէին զնոսա իբրեւ ժամս 2 եւ երաշխաւոր
եղեն չհասանել միւսանգամ վնաս ինչ 'ի Քաղաքապետէն,
եւ ետուն բանալ զդուռն վանաց 'ի հինգերորդ ժամու·
եւ ըստ խնդրանաց նոցա ետուն 5700 դահեկան 'ի ձեռն
Դատաւորին, հաշուել 'ի ժամանակին 'ի հարկս Բդեշխին։

Ի սմին ժամանակի Կուսակալն Սիդոնի Աբտուլլահ Փա-
շայ ժողովէր զծանր հարկս եւ 'ի Յոպպէ պահանջէին 'ի
Հայոց քսակս 10, եւ Հայք ոչ ունէին անդ ժողովուրդս,
բաց յերից աղքատաց· Քաղաքապետն խնդրէր զգումարն
զայն 'ի վանաց, որոյ Տեսուչն անճարացեալ եթող զվանքն
և խոյս ետ յԵրուսաղէմ, և Քաղաքապետն ակն ունէր առ-
նուլ զդրամն յԵրուսաղեմէ· իբրեւ ետես թէ նոքա ան-
փոյթ են զայնմանէ, արտաքսեաց զմիաբանս 'ի վանաց,
փակեաց զդուռն եկեղեցւոյն և զվանաց և էառ զփականս
նոցին, և մնաց փակեալ 'ի 10 Յունվարէ մինչեւ 'ի Մարտ
21· 'ի մի կողմն վանաց նստոյց զօրս, և բացեալ զդրունս
մթերանոցաց արար ախոռս ձիոց· եօթն Խորհրդականք բա-
զումս վաստակեցան վասն այսր, այլ ոչ կարացին թափել
զնա 'ի ձեռաց նորին· անկեալ էին 'ի տագնապ մեծ, զի ոչ
կարէին վճարել զտոկոսիս պարտուց որոց գումարն հասեալ
էր 5000 քսակ։ Ուստի հարկադրեալ գրեցին 'ի Կոստան-
դինուպօլիս առ իշխանաւորս ազգին, գտանել զելս հնա-
րից· 'ի հասանել Փայեկին 'ի քաղաքն Շէպին Ղարահիսար՝
կալաւ զնա Դատաւոր տեղւոյն իբրեւ լրտես և եդ 'ի բան-
տի, և զթղթեանս առաքեաց 'ի Դուռն· և նոցա թարգ-
մանեալ ծանեան զմիտ բանին և առաքեցին առ Պատրի-
արքն Հայոց· և նորա գրեալ խնդրեաց հրովարտակ դա-
տարկել զվանս Յոպպէի և տալ զբանալի նորին վանակա-
նաց։ Յետ առնլոյ զհրովարտակն բազում դժուարութեամբ՝
առին նաեւ գիր յանձնարարական 'ի գործակատարէ Աբ-
տուլլահ Փաշայի և առաքեցին յԵրուսաղէմ զպատճէն նո-
րին, և զհրովարտակն 'ի ձեռն գործակատարի նորին յղե-
ցին առ Աբտուլլահ Փաշայ յԱքքէ գործադրել զայն եւ
զպատասխանն գրել 'ի Դուռն· զի այնպէս պատուիրեալ
էր Տէրութիւնն· և 'ի Դրանէ գրեցին առ Դատաւոր Շէ-
պին Ղարահիսարու արձակել 'ի բանտէ զթղթատարն,
(1824· 'ի 23 Յունիսի)։